ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 163

ք. Երևան 24 . 02 2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ՀՀ զինանշանի, դրոշակաձողի, դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ- ԳՀԱՊՁԲ-24-8/17» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ՝ 08242265, գործունեության հասցե՝ ՀՀ ք. Երևան, Տիգրան Մեծի 17/ հետ 24.10.2024թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-24-8/17-2 գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավոր էր 2024թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.11.2024թ., մատակարարեր 2000 հատ դրոշներ:

Քանի որ վերոնշյալ ապրանքները չեն մատակարարվել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2025թ. փետրվարի 14 -ին** միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Պայմանագիրը լուծելուց հետո, չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովման գումարների վճարված լինելու մասին տեղեկատվություն, ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ